




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով


ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՏՐԱԿՏՈՐԱԲԱՐՇ ԳՈՒԹԱՆ



631.3
ժ-39

Խ.Ս.Հ.Մ. ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1931

631.3
2-39

Բ. Ը. Ժ Գ Ը Ն Ո Վ

30 JUL 2010

ՏՐԱԿՏՈՐԱԲԱՐՇ ԳՈՒԹԱՆ

ԳՈՒԹԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1931

Քարգմ. Ար. Ավ.

Главлит А. 85349.

15-я типография ОГИЗ, Советское законодательство, М. Дмитровка, 18.

Тираж 5000



35131-62

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հսկայական քայլերով աճում և սոցիալիստական տրնտեսություն համայնացված հատվածը: Նրա աճման հետ միասին ծավալվում և նաև գյուղատնտեսության մեքենայացումը: Ճանաչակ և հարյուրավոր միլիոն ուղբուտրակտորներ և զանազան գյուղատնտեսական սարքավորում ուղարկվում և կոլխոզային դաշտերի մշակման և նրանց բերքի հավաքման համար:

Մեքենա-տրակտորային կայանների կազմակերպման հետևանքով կոլխոզային դաշտերի մշակումը տրակտորներով ստանում և խոշոր ծավալ:

Մեքենա-տրակտորային կայանները խոշոր դեր են կատարում մեքենայացման և կոլեկտիվացման տեմպերի ուժեղացման գործում, ուստի և հասկանալի չէ այն կարևոր նշանակությունը, վորը տրվում և նրանց աշխատանքին կուսակցության, կառավարության և ամբողջ հասարակայնության կողմից: Բացի կոլխոզների թվական աճմանը նպաստելուց, մեքենա-տրակտորային կայանները կոլխոզները շաղկապող ողակ են հանդիսանում:

Անցյալ տարի մենք ունեյինք 160 կայան, այս տարի կազմակերպվելու յեն 1500, իսկ մինչև 1933 թ. կայանների թիվը հասնելու յե 3000. Խորհրդային լայնածավալ միության բոլոր շրջանները ունենալու յեն կայաններ: Ահագին քանակությամբ պատրաստված մարդկանց կարիք և

լինելու տրակտորների և նոր գյուղատնտեսական մեքենաների վրա աշխատելու համար: Զանազան դասընթացները, հատուկ հոգովաները գյուղատնտեսական հանդեսներում և առանձին գրքույկները գյուղատնտեսական մեքենագործության շուրջը պիտի գան ոգնելու գյուղատնտեսության նոր, յերիտասարդ շինարարներին և մեխանիզատորներին՝ տրակտորիստին, բրիգադիրին և դաշտավարին:

ՏՐԱԿՏՈՐԱՔԱՐՇ ԳՈՒԹԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տրակտորի ոգնության մեջ կատարվող բազմազան աշխատանքների մեջ առաջին տեղերից մեկն է բռնում վարը, վարելը: Այդ աշխատանքը առանձնապես ծանր է, ուստի և առաջին հերթին նա յե գցվում տրակտորի վրա:

Տրակտորով վարելու համար ոգտվում են հատուկ տրակտորաքարշ գութաններով: Այդ գութանները ձիաքարշ գութաններից ավելի խոշոր են և շինված են ավելի ամուր ու դիմացկուն մասերից:


Տրակտորաքարշ գութանը կազմված է շրջանակից (рама), վորին ամրացրած են գութանի կորպուսները՝ այդ կորպուսները կրում են գութանի աշխատող—բանվոր մասերը—խոփը, թևը (отвал) և կրունկը, շրջանակին ամրացրած են նաև լծակները՝ (рычаги), վորոնք ծառայում են աշխատանքի ժամանակ վարին այս կամ այն խորությունը տալուն, այլ և գութանը աշխատանքի գցելուն, անիվները և տրակտորին կցելու սարքերը:

Ուսումնասիրենք գութանի ամենապատասխանատու մասերի կառուցվածքը:

Քանի վոր մեզ մոտ տարածված են յերկու տեսակի տրակտորաքարշ գութաններ՝ ամերիկական և յեվրոպա-


կան, — նկարագրույժյան ժամանակ կանգ կառնենք ամեն մի տեսակի առանձնահատուկ կողմերի վրա:

Մեր գործարաններից բաց թողնվող գութանները շինվում են ամերիկական գութանի տիպով:



Նկ. 1. Խորհրդային տրակտորաքարշ գութան «Հեկտեմբ. Հեղափոխության» անվ. գործարանի, մարկան TDBSY.

1. Խոփը, 2 թևը, 3 շրջանակը, 4 Դիսկավոր ձեկնը (դանակը), 5 աղասային անիվի լծակը, 6 խորության լծակը, 7 ավտոմատի քարշիչը, 8 կցառարը (принцеп)



Նկ. 2. Գերմանական տրակտորաքարշ գութան «Պինչեր» Սակկի.



1. Խոփը, 2 թևը, 3 արմատաշերտի կորիչ (дерносним), 4 դիսկավոր ձեկն, 5 շրջանակ, 6 ավտոմատի թուկերը, 7 գութանի կանոնավորիչը (регулятор), 8 կցառարը, 9 յետի անիվը.

Շրջանակը. Գերմանական գութանների շրջանակը ավելի յերկար է, քան ամերիկականի: Այս շրջանակին բոլորով ամրացվում են պողպատե ձուլածո ստոյկաներ, իսկ առջևից՝ արմատաշերտի կտրիչը (дерно́сним) և ձևիչը: Գերմանական գութանների շրջանակն ունի հասարակ ուղղանկյուն կտրվածք:

Ամերիկական գութանների շրջանակը վերջում ծռած է: Այդ ծռած մասին ամրացվում են գութանի աշխատող մասերը:

Ավտոմատը հարմարեցվում է դաշտանիվի վրա: Այս դրոշյունը պաշտպանում է ավտոմատը հողով կեղտոտվելուց: Գութանը ավտոմատորեն բարձրացվում է առանձին լծակի օգնությամբ, վորը թոկով միացած է տրակտորի ստին: Ավտոմատի կառուցվածքը հետևյալն է.

Դաշտանիվին անխախտ ամրացած է չուգունե մի ուրիշ անիվ՝ կողերով:



Նկ. 3. 1. Ավտոմատի դիսկը շնիկների կոմպլեկտով, 2. անիվը ավտոմատի կողերով:

Այս անիվը պտտվում է դաշտանիվի հետ միաժամանակ: Դաշտանիվի սոնուն՝ կողավոր անիվին կից, նույնպես անխախտ կերպով անցկացված է ավտոմատի դիսկը—

շնիկների մոլֆտան: Գութանի դնալու ժամանակ այդ մոլֆտան մնում է անշարժ: Ավտոմատի դիսկը պետք է ընդհուպ մոտենա ավտոմատի կորպուսին մեխանիզմը փոշուց և կեղտից պաշտպանելու նպատակով:


Տրակտորիստի կողմից թոկի միջոցով քաշելով լծակը, դիսկին կից լծակի վրա ամրացած անիվակը դուրս է գալիս դիսկի վրայի փոսիկից, ղրանով ազատվում են շնիկների լծակները և տեղի յե ունենում ավտոմատի դիսկի կցումը ավտոմատի կորպուսի կողերին: Շնորհիվ այդ կցմանը, կողավոր անիվը, շրջվելով իր դաշտանիվի հետ միասին, շրջում է միաժամանակ նաև անիվի առանցքը: Գութանը բարձրանում է և դուրս է գալիս հողի միջից: Սուրբաջնող մեխանիզմի կցումը խանգարվում է, և անիվը նորից սկսում է շրջել:

Գութանի կորպուսը նորից հողի մեջ իջեցնելու համար հարկավոր է նորից թոկը քաշել և ձգել լծակը: Ձի կարելի թոկը ձգած պահել, հարկավոր է անմիջապես բաց թողնել, վորովհետև թոկը յերկար ժամանակ ձգված պահելիս ավտոմատը անկանոն է աշխատում:

Ավտոմատի այս տիպը համեմատաբար պարզ է: Բարդ աշխատանք չէ նրան հավաքելը և խնամելը: Աշխատանքի մեջ նա առանձնապես լավ է, վորովհետև հարվածները հարթվում են և ստացվում է սահուն աշխատանք: Ավտոմատի այս տիպը շատ տարածված է: Դրվում է նաև հակոտեմբ. Հեղափոխության» անվան գործարանի (Ուդեսսայում) արտադրած գութանների վրա:

Գերմանական Սակկի գութանն՝ ըրին դրվում է ու է յ կային տիպի ավտոմատ: Այս ավտոմատը շարժման մեջ է դրվում նույնպես ձգելով: Մեկ քաշելով գութանը իջեցվում է, իսկ մյուսով—բարձրացվում հողից:

Ձորերորդ նկարի վրա ցույց է տրված ավտոմատի յերեք գրությունը. նկար 4,1 ցույց է տալիս բարձրացնող մեխանիզմը այն դրությամբ, յերեք գութանը հարկավոր է փոխա-



Նկ. 4. Սակկի գութանների ռեյկային ավտոմատը

1. Բարձրացնող մեխանիզմը այն դրությամբ, յերեք գութանը փոխադրվում է, 2. ավտոմատը պատրաստված է աշխատանքի, 3. ռեյկան միացած ատամնավոր անիվին, —տառերի նշանակությունը—ա—լծակի կոթը, b—յեղանաձև լծակ, d—վրնաձև փորվածքներով լծակ, h—ռեյկան, i—անիվն ատամնակալով:

դրել մի տեղից մյուսը: Այստեղ յերևում է, վոր կոթի (a) միջոցով լծակը (d) շարժելով մյուս, յեղանաձև լծակը (b) թեքած է դեպի առաջ: Շնորհիվ անիվների առանցքի ուղղահայաց դիրքի, շրջանակի առաջի մասը բարձրացած է.

Նկար 4, 2. ավտոմատը պատրաստված է աշխատանքի Շարժելով կոթը (a) հակառակ կողմը, լծակը (b) թեքված է դեպի յետ: Կցվածությունը խանգարելու համար e կցիչը յետևի անիվի առանցքի վրա գտնվող մուկթայի լծակի հետ մեկտեղ պետք է քաշել: Գութանը կիջնի և կընդունի աշխատանքի համար անհրաժեշտ դիրքը: Յերկրորդ անգամ քաշելով, մենք իջեցնում ենք h ռեյկան ավելի ցած և միացնում նրան i ատամնավոր անիվին, վորը նստած է դաշտանիվի սոնու վրա (տես նկար 4, 3): Գութանի առաջ շարժվելու ժամանակ նա հույի միջից դուրս է դալիս:

Աշխատանքի ժամանակ հատուկ լծակով, յետևի անիվին միացված շղթայի ոգնությամբ, կանոնավորվում է գութանի յետևի մասի բարձրացումը:

Լծակներ.—Գութանը աշխատանքին հարմար կարգավորելու համար կան հատուկ լծակներ: «Հոկտեմբերյան Հեղափոխության» անվան գործարանի արտադրած գութանները վրա աջ լծակը ծառայում է աջ անիվի (ակոսանիվի) բարձրացումը սահմանափակելու համար: Լծակը աղեղի վրա տեղափոխելուց է կախված դաշտանիվի բարձրացնելը կամ իջեցնելը խոփերի մակերևույթից 8 դյույմի սահմաններում:

Գութանի աշխատանքի ժամանակ շրջանակը պետք է միշտ հորիզոնական դիրքում լինի: Շրջանակի ուղղումը կատարվում է վերոհիշյալ աջ լծակով: Վարի սկզբում, առաջին ակոսը անցնելիս, աջ անիվը պտտվում է չվարած դաշտով. անհրաժեշտ է աջ լծակը վերև բարձրացնել և ուղղել շրջանակը: Այդպես պետք է վարվել և այն դեպքում, յերեք պահանջվում է գութանը հարմարեցնել ավելի խորը վարելու: Յերեք գութանը անցել է արդեն նորմալ աշխատանքի, լծակը յետ են շրջում և դնում 3-դ ատամի

վրա, այսինքն այն դրությանը, յերբ աջ անիվի բարձրացումը սահմանափակված է խոփերի մակարդակով:

Յերկրորդ լծակը, ձախը՝ նշանակված է վարի խորությունը կանոնավորելու: Այս լծակը կարելի չէ ամրացնել իր հատվածին յերկու կերպ—կամ վերին անցքին, յերբ անհրաժեշտ է կանոնավորել վոչ խորը վարը՝ մինչ 5 դյույմ, կամ՝ ներքին անցքին, ավելի խորը վարելու համար: Ձախ լծակը վեր տեղադրելուց, գութանը խորանում է, իսկ լծակը ցածացնելու դեպքում պակասեցնում ենք խորությունը:

Ձ-դ լծակը տեղադրելիս անհրաժեշտ է հետևել, վորպեսզի գութանի շրջանակն ընդունի հորիզոնական դիրք: Ուղղումը տեղի չէ ունենում միաժամանակ աջ անիվը համապատասխան խորության տեղադրելով—աջ լծակի ոգնությամբ:

Գութանի ակոսում գտնված ժամանակ, լծակները սանրածև աղեղի վրա ցած տեղադրել կարելի չէ միայն գութանի շարժվելու դեպքում: Իսկ վեր տեղադրել կարելի չէ գութանի ամեն մի դրության ժամանակ:

Սունիի պլանկայի ոգնությամբ աջ և ձախ անիվները կապված են իրար հետ: Ստացվում է այնպիսի մեխանիզմ, վոր յերկու սունիներն ել պտտվում են միասին, յերբ գութանը ազատ է, և կարող են այլ կերպ կարգավորել, յերբ գութանը իջեցրած է:


Բացի լծակների միջոցով գութանը բարձրացնելուց, դաշտանիվի կարգավորումը մի քանի այլ տիպի գութանների վրա կատարվում է վինտային մեխանիզմով: Կարգավորումը կանոնավորելու համար հարկավոր է պտտել հատուկ կոթը, վորը սովորաբար ունենում է հարկավոր յերկարություն, վորպեսզի տրակտորիստը նստած տեղից հասնի նրան:

Կա նաև բարձրացման խառն տիպ—լծակավինտային: Վերջին տիպը պատահում է յեվրոպական գութանների վրա:

Գութանի կորպուսը կազմված է ստոյկայից (թուր) վորին ամրացվում են թևը, խոփը և դաշտատախտակը (полевая доска): Ամերիկական և Գերմանական գութանների կորպուսները իրենց կառուցվածքով բավականին տարբերվում են իրարից:

Ամեն մի գութանի աշխատանքը, հետևապես և տրակտորային գութանի, այս ե. կտրել հողաշերտը, շուռ տալ այն և փշրել: Այդ աշխատանքը ավելի լավ կատարելու համար ընտրվում են համապատասխան աշխատող որգաններ:

Ամերիկական գութանների թևերը (отвал) զանազան ձևի չեն: Նայած թե ինչ աշխատանքի համար են նշանակված, նրանք ունեն այս կամ այն ձևը:



Նկ. 5. Ամերիկական գութանների կորպուսների տիպեր: 1—Մարկա МН և 2—մարկա МК—ունիվերսալ կորպուս, 3—մարկա Мг—կորպուս ծղոտ (стерня) վարելու, 4—մարկա ММ—կորպուս առհողերի համար, 5—մարկա МН—բրեկեր—խամ հողերի համար:

Տարբերում են ամերիկական գութանների կորպուսների հինգ հիմնական տիպեր:


1. Ունիվերսալ, ամենից տարածված տիպը, ունի կիսավինտածև թև: Հողաշերտը շրջվելու ժամանակ չի

կոտրւում, այլ թեթև կերպով փշրվում է: Այս թեթև ավելացվում է յերկարացնող մաս, վորը, ըստ կարգավորման, կարող է կամ շրջել հողաշերտը կամ փշրել: Մարկաներ MN և MK:

2. Ծղոտ վարելու համար կույլտիվատորի տիպի կորպուսներ: Ունեն կոր թևեր, լավ փշրում են: Առանձնապես լավ աշխատում է հնամշակ, հնուց վարվող հողերում: Աշխատանքի մեջ առաջինը քիչ ծանր է: Մարկան՝ Mg.

3. Սևահողայինը նույնպես լավ փշրում է հողաշերտը: Մի քիչ վատ շուռ է տալիս: Գործածվում է սևահողերում և կարմրահողերում: Շնորհիվ թևերի առանձնապես կոր ձևի, կաշող հողերում աշխատում է ազատ, յենթարկվելով ինքնամաքման: Մարկան MM.

4. Շոտլանդական կորպուսը գործ էածվում կավահողերում: Աշխատանքի ժամանակ հողաշերտը շրջվում է, պառկում է ժապավենաձև, տալով ձեղքվածքներ:



Նկ. 6. Գերմանական գութանների կորպուսների տիպեր

1. Մարկա K—փափուկ, բայց կաշող հողերի համար
2. Մարկա M—միջակ և թեթև հողերի համար
3. Մարկա S—յերկարացրած թևով, ծանր հողերի համար:

5. Բրեկեր—կորպուսը գործ էածվում խամ հողերը և արոտամարգերը վարելու համար: Ունի յերկար վինտաձև թև: 8—10 սանտիմետր խորությամբ վարելու դեպքում հողաշերտը լավ պառկում է ժապավենաձև:

Յեվրոպական տիպերից կանգ առնենք գերմանական՝ Սակկի գործարանի կորպուսների վրա: Իր «Պինչեր» գութ-

թանների համար գործարանը արտադրում է հետևյալ հիմնական տիպերը.

1. M — մարկան. կորպուսը միջին կորությամբ, բարձր ստոյկա. լավ է միջին և թեթև հողերի համար.

2. K — մարկան—կլոր ձևով, փափուկ բայց կաշող հողերի համար.

3. S—մարկան յերկարացրած ձևը՝ ծանր հողերի համար: Մասնանշվում են միայն հիմնական տիպերը: Արտադրվում են ինչպես ամերիկական, նույնպես և յեվրոպական գութաններ վորոշ թեքումներով ցույց տրված տիպերից: Ստացվում են զանազան միջանկյալ ձևեր: Սովորաբար, արտասահմանյան գութաններից ստացվում էյին մեզ մոտ՝ ամերիկականը ունիվերսալ կորպուսներով, իսկ գերմանական կորպուսների համար ընտրվում էյին այնպիսիները, վորոնք հարմարվելին աշխատանքի զանազան պայմաններին: Միայն հատուկ պատվերների ժամանակ ուղարկվում են առանձին լրացուցիչ հատուկ կորպուսներ:

Մի քանի յեվրոպական գործարաններ ևս արտադրում են գութաններ թեքումով դեպի ամերիկական տիպը, տալով գութաններին համապատասխան կորպուսներ և ձևեր:


Խոփը: Խոփը գութանի ամենապատասխանատու մասերից մեկն է: Նրա վրա յե ընկնում հողաշերտը կտրելու և ապա թևին հանձնելու ծանրությունը:

Խոփերը ևս ունեն զանազան կառուցվածք ինչպես ամերիկական, նույնպես և յեվրոպական գութանների վրա: Ամերիկական գութանի խոփը խիստ տարբերվում է յեվրոպականից: Խոփի առաջի ծայրը ունի առանձին կոր քիթ (տես նկ. 5). այս խոփը գութանին ամրացվում է շատ պարզ, շատ հասարակ միջոցով, վոր հնարավորություն է տալիս շտապ փոխելու մեկ խոփը մյուսով: Յեվ-

ըռպական տրակտորաքարշ գութանների խոփերը սովորաբար նույն ձևի յեն, ինչպես և ձիաքարշ գութանները (տես նկ. 6): Հարթ ե, հակառակ կողմից, քթի մոտ ունի պահեստի մաս, վորը ծառայում է խոփը նորոգելիս յերկարացնելու համար: Ամրացվում է գութանին ծածուկ բուրեղի ոգնությամբ:

Յեվրոպական մի քանի գործարաններ իրենց գութաններին տալիս են ամերիկական տիպի խոփեր:

խոփը և թևը կատարում են պատասխանատու աշխատանք, վորը կապված է մեծ շփման հետ, այդ պատճառով ել ավելի լավ և յերկարատև աշխատանքի համար պահանջում են առանձնապես ամուր նյութ: Պատրաստվում են նրանք կամ յերեքշերտային պողպատից, կամ արտադրվում են ցեմենտացման յենթարկված մակերեվով:




Նկ. 7 Դիսկավոր դանակը (A) ջոխտերով (B).

Յեռաշերտյան պողպատի յերկու դրսի շերտը ունեն ամուր պողպատ, իսկ միջինը-ավելի կակուղ, հոփվող պողպատ:

Ջոխտեր և արմատաշերտի կտրիչներ (дерносни́м): Ամերիկական գութանների վրա, կորպուսից

առաջ, շրջանաձև կամ դիսկավոր դանակի յեղանին ամրացվում են սեպաձև, վոչ մեծ խոփիկներ, վորոնք կոչվում են «ջոխտերներ»: Աշխատանքի ժամանակ այդպիսի խոփիկը կտրում է հողաշերտի անկյունը, վորն ընկնում է ակոսի մեջ և ծածկվում է նոր շերտով:

Ծի քանի գերմանական գութանների վրա կորպուսներից առաջ դրվում է արմատաշերտի կտրիչ (дерносни́м): Արմատաշերտի կտրիչը ունի փոքրիկ կորպուսի ձև: Կտրելով վերևից հորիզոնական շերտը, ձգում է այն ակոսի հատակը, վորտեղնա ծածկվում է հողաշերտով: Արմատաշերտի կտրիչով աշխատելը սովորականից շատ ավելի ծանր է:



Նկ. 8 A. գութանի կորպուսը ճիշտ կարգավորված արմատաշերտի կտրիչով, B. գութանի կորպուսը ճիշտ կարգավորված դիսկավոր դանակով:

Դանակը (ձևիչը). Հողաշերտը կտրելու համար ամրացվում է կորպուսից առաջ, շրջանակի վրա ամերիկական գութանների, և մի քանի գերմանական գութանների վրա դիսկավոր դանակ: Դանակը, կտրելով հողաշերտը, թեթևացնում է խոփի և թևի հետագա աշխատանքը:

Գերմանական ֆիրմաները արտադրում են գութաններ նաև սովորական սեպաձև դանակով: Այդպիսի դանակը ամրացվում է ճղմակով (хомут) շրջանակին: Նրա դերը նույնն է, ինչ վոր և դիսկավոր դանակինը:

Գաշտատախտակ. ավելի կայուն լինելու համար կորպուսը աշխատանքի ժամանակ հենվում է նույնպես դաշտատախտակին: Սովորաբար առջևի կորպուսի դաշտատախտակը ավելի կարճ է, քան յետևին: Մի քանի գութանների վրա դաշտատախտակը պահպանելու համար ցածից ամրացվում է կրունկ (пята). դաշտատախտակը շինվում է պողպատից կամ մոխրագույն կարծր չուգունից:

Անիվները. Սովորաբար տրակտորային գութանները ունեն 2 գլխավոր անիվ և 3-դը՝ փոքրիկը, վորը պտտվում է ակոսի հատակով, գութանի յետևից:


Անիվներից պահանջվում է, վորպեսզի նրանք լինեն դիմացկուն: Ճաղերը պետք է լավ ամրացվեն շրջանակին: Շրջանակը շինվում է լայն, մանավանդ յեթե գութանը նշանակված է խոնավ հողերի համար: Շփումը պակասեցնելու համար հարկավոր է յուղել ինչպես առանցքները, նույնպես և անիվների անցքերը: Ցուղում են թանձր յուղով-Սովորաբար Շտաուֆերի յուղամանների միջոցով:

Գութանին ցույց տրվող դիմադրությունը պակասեցնելու և գութանի կրունկը շփումից պաշտպանելու համար մի քանի գութաններին, առանձնապես բազմակորպուսայիններին, ամրացվում են յետևից փոքրիկ անիվներ: Շփումը պակասեցնելու նպատակով փոքրիկ անիվը դրվում է մի քիչ թեք:

Կցասարք (прицепка). Գութանը ամրացվում է տրակտորին առանձին սարքերի ոգնությամբ, ասպես կոչված գութանի կցասարքով:

Գութանի կցասարքեր կան զանազան սխեմանի: Կցասարքից պահանջվում է, վոր նա թույլ տա կարգավորելու գութանը՝ թե՛ ակոսը լայնացնելու կամ նեղացնելու և թե՛ վարը խորացնելու ուղղությամբ: Միայն շիտակ կարգավորված գութանը կտա ուղիղ ակոս:

Կանգ առնենք «Հոկտ. Հեղափոխ.» անվան գործարանի գութանների կցասարքի նկարագրության վրա (Մարկաներ ТДВ8, АТЧВ7 և АТДВ8):



Նկ. 9 ТДВ8У մարկայի գութանի կցասարքը.

1. Կցասարքի թուշը, 2. Ընդմիջող գոտին անցքերով, 3, 4 յերկարաձիգ քարշիչ 5. Լծային մանյակ. 6. Նախապաշտպանող սեպիկ.

Առջևից շրջանակի կողերին ամրացված են թշերը և կցասարքերը: Թշերի մեջ կան անցքեր, վորոնց բոլորի և անկյունանիվների միջոցով ամրացվում է ընդմիջող գոտին: Ընդմիջող գոտուն ամրացրած է յերկայնաձիգ քարշիչը, վորն ունի նույնպես լրացուցիչ միացնող կոր պլանկա: Յերկարությամբ ձգվող կցիչի (сцепка) ծայրին ամրացրած է լծային մանյակը:


Տեղադրելով ընդմիջող գոտին կցասարքի կողերի թշերին, մենք կանոնավորում ենք գութանի բարձրությունը: Ինչպես շատ բարձր, նույնպես և շատ ցածր դրությունը տալիս են անկանոն աշխատանք: Անհրաժեշտ է գտնել

35131-62



բարձրութեան շիտակ դրութիւնը: Այդպիսի կարգավորման դեպքում գութանը իր դաշտատախտակով հենվում է ակոսի հատակին: Ձախ անիվը հեշտութեամբ պատվում է հողի վրա:

Գութանի կարգավորումը հորիզոնական հարթութեամբ կատարվում է յերկարութեամբ ձգվող կցասարքը ընդմիջող գոտու անցքերի վրա տեղադրելու միջոցով: Այստեղ հուլանսի հարկավոր է գութանի ճիշտ կանոնավորումը: Յեթե գութանը դուրս է ընկնում ակոսը և դաշտատախտակը հեռանում է ակոսից, կցասարքը հարկավոր է տեղադրել դեպի ձախ, և ընդհակառակը՝ յեթե գութանը խիստ ողմում է ակոսի պատին, կցասարքը ընդմիջող գոտու վրա տեղադրվում է դեպի աջ:



Նկ. 10. կցասարքի կարգավորումը

1. տեղափոխութիւնների ժամանակ 2. վարելու ժամանակ 3. հորիզոնական կանոնավորիչը.

«Հոկտեմբ. հեղափոխութեան» անվան գործարանի АТДВЗ մարկայի կցասարքը անխախտ է, անշարժ: Շըրջանակի առաջի մասում գտնվում է կանոնավորիչը, վորի տեղադրումներով, փոփոխվում է կցումը ըստ լայնութեան

և ըստ բարձրութեան: Բարձրութիւնը կարգավորել կարելի յեփոփոխելով կանոնավորիչի թեք դրութիւնը, ամրացնելով բոլոր սանրիկի վերևի կամ ներքևի դրութեան մեջ: Յեթե այս փոփոխութիւնը չի բավարարում, այն ժամանակ ամբողջ սանրիկը (гребенка) տեղադրվում է իր քթով վեր կամ դեպի վար: Այսպես, վարելու ժամանակ կցասարքը դրվում է դեպի վար, իսկ տեղափոխութիւնների ժամանակ — դեպի վեր (տես նկ. 10):

Հորիզոնական դրութեամբ փոփոխելու համար կա առանձին կանոնավորիչ: կցասարքը միջին, աջ կամ ձախ կողմը դնելով, նայած պահանջին, գտնում են գութանի շիտակ դրութիւնը:

Գութանի շիտակ դրութիւնը վորոշվում է հուլանշաններով, վորոնք նշված են կցասարքի նախկին սխեմայի նկարագրութեան ժամանակ:

Հարկավոր է ուշադրութիւն դարձնել այն բանին, վոր սանրիկը միացած է գութանի շըջանակին փայտե սեպով: Այդ սեպը նախապաշտպանիչ դեր ունի. մեծ դիմադրութեան ժամանակ նա կոտրվում է, ազատելով գութանը կոտրվելուց:

Տրակտորաքարշ գութանի մասերը նկարագրելիս, մենք նշել ենք գութանների միայն մի քանի տեսակները: Այս փոքրիկ գրքուկում տալ Յեվրոպայի և Ամերիկայի բազմաթիվ գործարաններում արտադրվող բոլոր տեսակի գութանների նկարագրութիւնը անհնարին է: Յեվրոպայի և Ամերիկայի գութանների անվանացուցակը և մարկաները կազմված են տարբեր կերպով: Գերմանական գութանների մարկաներում գութանի վարի սահմանային խորութիւնը ցույց է տրվում դյույմերով, 7, 8, 10-դյույմ, իսկ ամերիկական գութաններում դյույմերով ցույց է տրվում ամեն մի խորի վարի լայնութիւնը, որինակ՝ 10,

13, 14 դյուլմ: Սա կոչվում է գութանի բանվորական առը:

Տրակտորաքարշ գութանները շինվում են յերկու, յերեք, չորս և ավելի թվով կորպուսներով: Նայած տրակտորի ույթին, ընտրվում է այս կամ այն գութանը: Մի քանի գութաններ ունեն բաժանվող—հանվող կորպուսներ: Այսպես, յերեք կորպուսային գութանի մի խոփը հանելով, կատանանք յերկկորպուսային գութան: Նույնպես չորսկորպուսայինը կարող է վերածվել յեռակորպուսայինի:

«Հոկտեմբ. հեղափոխութ.» անվան գործարանի АТЧВ7 մարկայի չորսկորպուսյան գութանի մի կորպուսը հանելով, կարող ենք վերածել յեռակորպուսայինի: Նոր արտադրվող յերկկորպուսային АД8 մարկայի գութաններին ավելացնելով մեկ կորպուս ևս, դարձնում են յեռակորպուսային: Յեռակորպուսային АТ8 մարկայի գութաններին ավելացնելով մի կորպուս, դարձնում են քառակորպուսյան:

Կորպուսների ավելացումը կամ պակասեցումը կատարվում է նրա համար, վորպեսզի լրիվ ոգտագործվի տրակտորի քարշի ուժը: Ուրիշակ. վորևե աշխատանքի ժամանակ տրակտորը չի կարող քաշել չորսկորպուսային АТЧВ7 մարկայի գութանը, այլ կարող է միայն յերեք կորպուսայինը քաշել: Հետևապես, մի խոփը պետք է հանել: Ընդհակառակը, տվյալ աշխատանքի համար յեռակորպուսային գութանը տրակտորի համար քիչ է, տրակտորի ուժը լրիվ չի ոգտագործվում, հարկավոր է գութանի յերեք կորպուսին ավելացնել չորրորդը:

Կորպուսների փոփոխությունը աշխատանքի ժամանակ դժվար է: Հարկավոր է չորսկորպուսային գութանի շրջանակի յետևի մասը չորրորդ կորպուսի հետ միասին հանել: Հանվում է յետևից փոքրիկ անիվը և տեղադրվում է յերրորդ կորպուսի վերջին: Վերջին յերրորդ կորպուսի

վրա դնել կարճ դաշտատախտակի փոխարեն յերկարը: Քարշիչը, վորը ծառայում է յետևի անիվը բարձրացնելու համար, կարճացնել:

Կորպուսների թիվը ավելացնելու դեպքում, մեկ կորպուսը անցկացվում է, տեղավորելով մյուս մասերը համապատասխան կարգով:

Բերում ենք մի քանի տվյալներ մեզ մոտ ամենից ավելի տարածված գութանների մասին

Մարկան	Գործարանը	Խոփերի թիվը	Առի լայնությունը սանտիմետրերով	Վարի սահմանային խորութունը սանտիմետրերով
1. АТДВ8	«Հոկտ. Հեղ.» անվ.	2	60	30
2. ТДВ8У	»	2	60	20
3. АТЧВ7	»	4	106	17,5
4. АТЧВ7	»	3	78	20
5. АД8	»	2	60	20
6. АД8	»	3	90	20
7. АТ8	»	3	90	20
8. АТ8	»	4	120	20

Առաջին յերեք գութանների վերաբերմամբ տառերը հետևյալ նշանակությունը ունեն:

А—ավտոմատային, Т—տրակտորային, Д—յերկկորպուսային (двухкорпусный), Ч—չորսկորպուսային (четырекорпусный), В—վինտաձև թևով (винтовой отвал), թվերը 7 և 8 ցույց են տալիս դյուլմերով վարի սահմանային խորութունը աշխատանքի ժամանակ, У—ուժեղացրած (усиленный): Վերջին յերկու մարկայում—

(АД8—АТ8) А —ավտոմատային, Д—յերկկորպուսային (двухкорпусный), Т—յեռակորպուսային (трехкорпусный).

Բացի «Հոկտ. Հեղափոխ» անվան գործարանի գուլթաններից մեզ մոտ բերված են գուլթաններ Ամերիկայից՝ Ուիվեր Ջոն Դիր, Լիտվ Ջենիոս միջազգային կոմպանիայի գործարաններից: Յեվրոպական գործարաններից— Սակկի և Բեխերի:

Մեր արդյունաբերության զարգացմամբ արտադրական ծրագրների մեջ ամեն տարի ավելի և ավելի է մոծվում մեքենաքարշ գործիքների արտադրությունը, և խորհրդային արտադրության տրակտորաքարշ գուլթանները արտասահմանյան գուլթանների համեմատությամբ սկսում են գերակշռող դեր կատարել:

ՏՐԱԿՏՈՐԱՔԱՐՇ ԳՈՒԹԱՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒՅՑՈՒՆԸ

Տրակտորաքարշ գուլթանի արտադրողականությունը կախված է առի լայնությունից, գուլթանի դիմադրությունից և այն տրակտորի արագությունից, վորը քաշում է գուլթանը: Յերկխոփանի գուլթանը, ավելի նեղ առով, կվարե ավելի քիչ, քան յեռախոփանին և չորսխոփանին, ավելի լայն առով, ավելի շատ, քան յեռախոփանին:

Ընտրության ժամանակ աշխատում են ջոկել, վորքան կարելի յե շատ խոփավորը, բայց չծանրաբեռնելով տրակտորը չափից դուրս: Մայրահեղ բեռնման դեպքում, յերբ տրակտորի ուժը չի բավականանում քարշելու գուլթանը— տրակտորը կամ կանգ է առնում, կամ հարկավոր է լինում աշխատանքի Զ-րդ արագությունը փոխել առաջին արագությամբ: Առաջին արագությունը տալու դեպքում վոչ միայն սակասում է արտադրողականությունը, այլև ինքը տրակտորը շատ ավելի շուտ է մաշվում: Այսպիսի ծանրաբեռնած աշխատանքը համարվում է անկանոն և մշտական աշխատանքի ժամանակ անթույլատրելի:

Միևնույն գուլթանը տարբեր աշխատանքի պայմաններում պահանջում է տարբեր քարշող ուժ: Այսպես խոր վարը ծանր է յերեսավարից: Մանր, արմատակալած, խոնավ հողերը պահանջում են ավելի քարշող ուժ, քան թեթև, ավելի չոր և հնամշակ հողերը: Այս պատճառով էլ, զանազան աշխատանքների ժամանակ միևնույն տրակտորին կցվում են զանազան թվի խոփերով գուլթաններ, հետևապես և փոխվում է գուլթանների արտադրողականությունը:

Կանգ առնենք տարբեր տրակտորներով քարշվող տարբեր գուլթանների աշխատանքի մի քանի որինակների վրա: Արտադրողականությունը հաշված է 10-ժամյան աշխատանքային ուրվա համար:

Պուտիլով գործարանի ֆորդգոն սխտեմի 10—20 ուժանոց տրակտորը յերկխոփանի գուլթանով բարակ խամահողում վարում է մեկ ու կես հեկտար, փափուկ հողերում արտադրողականությունը կարելի յե բարձրացնել մինչև 2 հեկտարի:

«Խնտերնացիոնալ» 10/20 ուժանոց տրակտորը յերկխոփանի գուլթանով խամ հողերում վարում է $2\frac{1}{2}$ հեկտար, իսկ փափուկ հողերում յեռափոխանի գուլթաններով $3\frac{1}{2}$ հեկտար:

«Խնտերնացիոնալ» 22/36 ուժանոց տրակտորը յեռախոփանի գուլթանով խամերում վարում է 3—8 հեկտար, իսկ փափուկ հողերում 4—կորպուսային գուլթանով, մինչև 5,2 հեկտար:


«Ջոն-Դիր» 15/27 ուժանոց տրակտորը յեռախոփանի գուլթանով խամ հողերում վարում է 3,4 հեկտար, իսկ չորսկորպուսանիյով փափուկ հողերում մինչև 4—5 հեկտար 10 ժամվա ընթացքում:

Արտադրողականության չափերը ցույց են տրված մոտավորը: Գուլթանի աշխատանքը, ինչպես արդեն տեսանք,

կախված է մի շարք պայմաններից, այդ պատճառով ել արտադրողականության չափը կարող է բերածից ավելի կամ պակաս լինել: Բերած նորմանները հարկավոր է ընդունել վորպես միջին:

ՏՐԱԿՏՈՐԱՔԱՐՇ ԳՈՒԹԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ

Տրակտորաքարշ գութանը շատ ավելի բարդ է, քան ձիաքարշը և պահանջում է ավելի ուշադիր վերաբերմունք: Աշխատանքի գցելուց առաջ հարկավոր է նրան լավ ուսումնասիրել, հարկավոր է լավ ծանոթանալ ինչպես նրա ընդհանուր կառուցվածքին, նույնպես և նրա պատասխանատու մասերի հետ: Հարկավոր է լավ իմանալ ամեն լծակը և նրան կառավարելու կանոնները: Գութանին պետք է նայել, ծանոթանալ նրան տանը, մինչև դաշտ




Նկ. 11 Դիսկավոր դանակը լցված է:

յելները: Անծանոթ գործիքներով աշխատելու դեպքում գործիքները հեշտությամբ կարելի չէ փչացնել: Աշխատանքից առաջ հարկավոր է ստուգել, ուղիղ է հավաքած գութանը, լավ են արդյոք յուզած նրա շփվող մասերը, ամրացնել թուլացած պտուտակները (գայկաները) և ուղղել ծոված մասերը:

Ծանոթանանք գութանի և նրա առանձին մասերի կարգավորման հետ:

Դիսկավոր դանակները դրվում են $1-1\frac{1}{2}$ սանտիմետր թեքումով դեպի ձախ կողմը: Նման դրությամբ հեշտ է կատարվում հողաշերտի կտրումը: Դիսկի կտրելու խորությունը պետք է հասնի մոտավորապես դանակի (ձևիչի) վարի ամբողջ խորության $\frac{2}{3}$ -ին: Դիսկավոր դանակը կարգավորում է այնպես, վորպեսզի դիսկի կենտրոնը և ձևիչի վերջը համատեղվեն (տես նկ. 8B): Յեթե հողը արմատապակած է կամ ծղոտը բարձր է, այն ժամանակ դանակը լցվելուց խուսափելու համար բարձրացվում է մոտավորապես մինչև խորության կեսը: Սովորական ձևիչը դրվում է մի քիչ թեք դրությամբ, կորպուսից առաջ, խոփի ծայրից մի քիչ վեր:

Արմատաշերտի կտրիչը (дерношник) կարգավորվում է այնպես, վորպեսզի աշխատանքի ժամանակ կտրված շերտը հավասար լինի մոտավորապես վարի ընդհանուր խորության $\frac{1}{3}$ -ին: Ջոյնտերը կարգավորվում է 5—6 սան-




Նկ. 12. Ջոդդության դիծը գնում է ծանրության կենտրոնի հետքից ցած:

տիմետրի խորության վրա: Ձևիչները (դանակ), Ջոյնտերները և արմատաշերտի կտրիչները պիտի լինեն սուր, բթանալու դեպքում հարկավոր է նրանց սրել:

Մեծ նշանակություն ունի գութանի աշխատանքի մեջ գութանի տրակտորին ուղիղ կցված լինելը: Անկանոն կցման դեպքում ստացվում է վատ աշխատանք: Ծիշտ կցումը պիտի լինի և՛ գութանի կարգավորման, և նրա առի լայնությանը համապատասխան:

Կցման դեպքում, յերբ ձգողության գիծը գնում է ծանրության կենտրոնի հետքից ցած, ստեղծվում է ուժեղ ճնշում գուլթանի յետին մասի վրա: Կրունկը, կամ փոքրիկ անիվը խիստ ճնշում են հողը: Կրունկը շուտ մաշվում է, և կարող է փոքրիկ անիվը կոտրվել: Ձախ անիվը հողին չի շփվում, գուլթանը աշխատում է վոչ ուղղագիծ, առաջի կորպուսը խորանում է յետևինից: Ճիշտ կարգավորման համար հարկավոր է կցասարքը բարձրացնել վեր:




Նկ. 13. Ձգողության գիծը գնում է ծանրության կենտրոնի հետքից բարձր.

Գուլթանը կցելու ժամանակ, յերբ ձգողության գիծը գնում է ծանրության կենտրոնի հետքից բարձր, ստացվում է դարձյալ անկանոն աշխատանք: Այս դեպքում ճնշումը խիստ փոխադրվում է անիվներին, վորոնք խորանում են հողում և գուլթանի յետի մասը ձգտում է բարձրանալ: Վերին կորպուսի դաշտատախտակը չի շրփվում ակոսի հատակին: Գուլթանը աշխատում է խոփերի ծայրերով: Խոփերը շուտ մաշվում են: Ճիշտ կարգավորելու համար անհրաժեշտ է կցասարքը իջեցնել ցած:

Կցասարքի ճիշտ գրությունը տրակտորի հետ ստացվում է այն ժամանակ, յերբ ձգողության գիծը և ծանրության կենտրոնի հետքի գիծը համատեղվում են: Այս կերպ կցված գուլթանը աշխատանքի ժամանակ հենվում է կորպուսներին, անիվները մեծ ճնշում են կատարում հողին և միևնույն ժամանակ չեն կախված ուղում: Ավտոմատը աշխատում է կանոնավոր:

Ինչպես արդեն ասել ենք, բացի գուլթանի բարձրությունը կարգավորելուց, անհրաժեշտ է նաև ճիշտ կարգավորել առի լայնությունը:

Ճիշտ, հորիզոնական կարգավորման դեպքում, ձգողության կենտրոնական գիծը և ձգողական դիմադրության կենտրոնական գիծը համատեղվում են: Յեթե կցումը կատարված է թեքումով դեպի ձախ կողմը, գուլթանը աշխատանքի ժամանակ ճնշում է դաշտատախտակով ակոսի ձախ կողմին: Առաջի կորպուսի առը պակաս է յետինից:



Նկ. 14. Ձգողության գիծը և ծանրության կենտրոնի հետքի հետքի գիծը համատեղվում են:

Գուլթանը կաշխատի անուղղաձիգ և ծանր: Կանոնավորելու համար հարկավոր է տեղադրել կցասարքը դեպի աջ:

Գուլթանը ավելի աջ կցելու դեպքում, նրա դաշտատախտակը ակոսի պատերից հեռանում է և գուլթանը թեքվում է դեպի չվարած կողմը: Յեղը ստացվում է անհարթ և գուլթանի աշխատանքը դժվարանում է: Կանոնավորելու համար հարկավոր է կցասարքը տեղադրել դեպի ձախ:

Կցասարքում կա փայտե սեպ: Այդ սեպը նախադգուշացման միջոց է և փոխարինել մետաղե բոլտով չի կարելի: Մեծ դիմադրության դեպքում սեպի տեղ կարող է կոտրվել գուլթանը: Սեպը կոտրվելու դեպքում նորը պիտի դնել փայտից:

Գութանի աշխատանքի կանոնավորման մասին լծակները միջոցով ասվել է, յերբ քննել ենք այդ լծակների նշանակությունը գութանի համար։ Այդ պատճառով էլ այստեղ կանգն ենք առնում նրանց մասին համառոտակի։

Հարկավոր է խիստ հսկողություն ավտոմատին, վորպեսզի նա չթուլանա։ Անհրաժեշտ է պահպանել ավտոմատի կորպուսի և դիսկի ամուր միացած (ընդհուպ) դրուժյունը։ Թուլացման դեպքում հարկավոր է ամրացնել։ Յեթե նկատվում է վոր ավտոմատը շիտակ չի աշխատում, անհրաժեշտ է հանել և ստուգել, ուշք դարձնելով լծակների վողջությունը։

Հաճախ աշխատանքի ընդհատման պատճառը լինում է խիստ աղբոսումը։ Հարկավոր է ավտոմատը մաքրել աղբից, կերոսինով լվանալ, լավ յուղել և նորից հավաքել։ Մասերի կոտրվածությունը դեպքում փոխարինել նորերով։

Ավտոմատը գութանի չափազանց պատասխանատու մասն է, այդ պատճառով էլ աշխատողի ուշադրությունը պիտի կենտրոնացնել նրա վրա։ Պարանը քաշելուց հետո պիտի իսկույն բաց թողնել և ձգած չպահել, վորովհետև այդ դրուժյան ժամանակ ավտոմատը չի աշխատում։

Ինչ վերաբերվում է խորություն լծակին և ակոսանիվի լծակին, դրանց տեղադրումով կանոնավորվում է աշխատանքի ժամանակ վարի խորությունը և շրջանակի հորիզոնական դիրքը՝ առանց շեղումների և թեքման։

Աշխատանքի ժամանակ հարկավոր է դիտել, վորպեսզի նրանք դուրս չպրծնեն սանրի բերանից և դրա շնորհիվ չփոխվի գութանի դիրքը։

Նոր կամ ընդմիջումեց հետո աշխատանքի դրվող գութանների թևը և խոփը պատած են լինում սպիտակ ներկով։ Հարկավոր է աշխատանքից առաջ մաքրել լաքի և ներկի շերտերը, վորպեսզի գութանի աշխատանքը չդժվարանա,

լանա, վորովհետև հողաշերտը դժվար կսահի թևից։ Հարկավոր է նույնպես մաքրել ժանգը։ Բոլորովին չաշխատած կամ ժանգոտած գութանը լավ կլինի առաջուց բաց թողնել ավազոտ հողերում։

Խոնավ հողերում հողը կպչում է գութանի թևին. հարկավոր է ժամանակ առ ժամանակ մաքրել մաքրիչով։ Աշխատանքի ժամանակ թևը պիտի լինի լավ հղկված, հայելու պես հարթ։ Այս պայմաններում աշխատանքը հեշտ է և շերտը շրջվում է ուղիղ։

Նման մակերևույթը պիտի պահպանել աշխատանքների ընդմիջման ժամանակ։ Յերկար ընդմիջումների ժամանակ ժանգոտելուց խուսափելու համար հարկավոր է յուղել կամ պատել կափիճի և ճարպի խառնուրդով։

Վարի վորակը կախված է նաև գութանի թևի տիպից— տեսակից։ Դրա համար էլ պիտի ընտրել գութանի համար այնպիսի թև, վորպեսզի համապատասխանի այն պահանջներին, վորոնք դրվում են մշակելիս։ Զանազան թևերի տիպերի մասին մենք արդեն կանգ ենք առել գութանների նկարագրության ժամանակ։

Գութանի խոփը, չնայած նրան, վոր շինվում է կարծր պողպատից, մաշվում է մյուս մասերից շուտ։ Խոփը չափազանց ծանրաբեռնված է և նրա շիտակ դրուժյունից է մեծ մասամբ կախված գութանի աշխատանքը։

Հաճախ, աշխատանքի ժամանակ նկատվում է, վոր գութանը հողում այլևս չի խորանում։ Ստուգելու դեպքում պարզվում է, վոր խոփերը կամ մաշել են կամ բթացել։ Բթացած խոփը հարկավոր է սրել, իսկ մաշածը յերկարացնել, ոգտագործելով այն պահեստի մասը, վորն ունի խոփը հակառակ կողմից։ Պիտի աշխատել պահպանել խոփի նախկին ձևը, վորովհետև խոփի ձևի խանգարումից խանգարվում է նաև նրա կանոնավոր աշխատանքը։

տանքը: Վորպեսզի համատացած լինենք, վոր նորոգման ժամանակ խոփը կընդունի իր նախկին ձևը, հարկավոր է նոր խոփից վերցնել նրա չափը և ստուգել նոր նորոգումից դուրս յեկած խոփերը:

Խոփը շատ է մաշվում, և հաճախ կարիք է լինում նրան փոխարինել: Խոփի նորոգումը հնարավոր է դարձնողում: Վորպեսզի գուլթանի աշխատանքը կանգ չառնի, հարկավոր է ունենալ պահեստի խոփեր, վորոնց հնար լինի փոխել դաշտում: Հարկավոր չե՞ ժլատ լինել մաշված խոփը փոխելու, սուր խոփը կծածկի աշխատանքի ընդմիջումից առաջացած պակասը:

Հարկավոր է հետևել նույնպես դաշտային տախտակին: Մաշվելու դեպքում հարկավոր է նրան փոխել, իսկ յեթե այդ անհնար է, նորոգել, բայց անպատճառ պահպանել նախկին ձևը:

Հարկավոր է հսկողություն ունենալ անիվների և սրունիների վրա: Վատ յուղելուց, վատ հետևելուց նրանք շուտ փչանում են: Հարկավոր է առաջուց գտնել փչացած մասը և տալ նորոգման: Գուլթանի վերջին փոքրիկ անիվը լցվում է հողով: Հարկավոր է նրան մաքրել և նրա կողերի փականները կարգավորել այնպես, վորպեսզի նա կատարի իր պարտականությունը՝ մաքրի անիվից ցեխը:

Հսկայական նշանակություն ունի գուլթանի շիտակ և հաճախակի յուղումը: Այս պատճառով գործին պիտի վերաբերվել խիստ ուշադիր: Գուլթանի շուտ մաշելը և անժամանակ աշխատանքից ընկնելը (փչանալը) հարկավոր չափով չյուղելուց է:

Կանգ առնենք գուլթանի առանձին մասերի յուղելու վրա: Ավտոմատը յուղելուն մենք արդեն ուշադրություն ենք դարձրել: Ավելացնենք, վոր գուլթանը աշխատելու ժա-

մանակ ավտոմատի յուղելը պիտի կատարվի շաբաթական մեկ անգամից վոչ պակաս:

Առատ կերպով պիտի յուղել գուլթանի անիվների սրունիները: Անիվների վրա յեղած Շտաուֆերյան յուղամանները պիտի լիքը պահել յուղով: Յուղամանները լցնելիս պիտի հետևել, վորպեսզի նրանք իսկապես մինչև պոռնկները լցվեն, վորովհետև միայն այդ դեպքում խոփը ամրացնելուց հետո յուղը կմղվի դեպի սունին: Ժամանակ առ ժամանակ հարկավոր է բանալ խոփը (2—3 անգամ) և դուրս մղել յուղը: Յուղը ծախսվելու (վերջանալու) դեպքում հարկավոր է նորից լցնել:

Շատ գուլթանների վրա Շտաուֆերյան յուղամանները փոխարինված են ալյուրի յուղամաններով, վորոնցից յուղումը կատարվում է ճնշման տակ: Ծնշումով յուղելը համարվում է լավ և գտնում է ավելի և ավելի տարածում: Այս ձևի յուղումը կատարվում է առանձին նասոսի միջոցով յուղի վրա կատարած ճնշումով:

Այն գուլթանները, վորոնց անիվների վրա կան կոլպակներ, թանձր յուղը լեցնում են այդ կոլպակները: Շուտ տալով կոլպակը յուղը մղում են անիվի անցքը: Աշխատանքի ժամանակ պարբերաբար պիտի կրկնել այս գործողությունը: Պիտի հետևել, վոր յուղը յերևա անիվի անցքի հակառակ ծայրից:

Աշխատանքի ժամանակ յուղամանը կորցնելու դեպքում հարկավոր է անցքը մաքրել և ծածկել փայտե խցանով: Անիվների առանցքները (սունիները) հարկավոր է պաշտպանել կեղտոտելուց, վորովհետև բացի այն վոր գուլթանի աշխատանքը կծանրանա, կմեծանա և նրանց մաշելու արագությունը: Պակաս յուղելու դեպքում անիվները կերվում են:

Դիսկավոր դանակը նույնպես մեծ աշխատանք է կատարում, և նրա առանցքը նույնպես պահանջվում է հաճախակի յուղում: Շուտ-շուտ յուղելով պաշտպանում ենք անժամանակ մաշելուց: Դիսկի շիտակ աշխատանքը տալիս է ուղիղ գիծ հողաշերտը կտրելիս: Մաշված առանցքի դեպքում դիսկը կտատանվի և կտրման գիծը կստացվի ծռռ ու մռռ:

Ժամանակ առ ժամանակ, կախված աշխատանքի տեղականությունից, հարկավոր է անիվի անցքերը և սունիները լվանալ սպիտակ նավթով (կերոսինով), նախապես մաքրել կաթ կեղտերը և մաշած մետաղի փոշին: Այն անցքերը, վորոնցով յուղը հոսում է, պետք է միշտ մաքրվեն:

Տեղափոխությունների ժամանակ վոմանք բեռնում են գութանը դանազան իրերով, ոգտագործելով գութանը ծանրություններ տեղախոխելու համար: Դա բոլորովին անթույլատրելի չէ, վորովհետև գութանը փչանում է:

Այս համառոտ հոգվածում չի կարելի տալ գութանի նորոգման լրիվ նկարագրություն: Գութանի նորոգումը բավականին բարդ է և պիտի կատարվի փորձված և մասնագետ վարպետների և դարբինների ձեռքով: Սխալ նորոգման և հավաքման դեպքում ստացվում է փչացած գործիք: Անփորձ աշխատողը հաճախ մեղադրում է մեքենային, իսկ իրապես վատ աշխատանքի պատճառը գութանի վատ հավաքելն և վատ կարգավորելն է:

Աշխատանքներից հետո գութանը պիտի լավ մաքրվի փոշուց և ցեխից, շփվող մասերը լվացվեն և լավ յուղվեն. խոփը և թևը նույնպես հարկավոր է յուղել և պահել ծածկի տակ, թույլ չտալով, վոր խոփը կպչի հողին:


Լավ պահելուց է կախված մեքենան յերկար ժամանակ ոգտագործելու հնարավորությունը:

ԻՆՁՊԵՆ ՎԱՐԵԼ ՏՐԱԿՏՈՐԱՔԱՐԵ ԳՈՒԹԱՆՈՎ

Տրակտորային գութանը ձիաքարշ գութանի համեմատությամբ ներկայացնում է իրենից բավականին մեծ գործիք: Այդ պատճառով աշխատանքից առաջ հարկավոր է ծանոթանալ նրան և ընտրել վարելու կերպը:

Գութանի առը, նայած կորպուսների թվին, փոփոխվում է: Այսպես որինակ՝ յերկխուփանի 12 դյույմանոց գութանի առը հավասար է 60 սանտիմետրի, յեռախուփանունը՝ 90 սանտիմետրի, չորս խուփանունը՝ 120 սանտիմետրի: Վարելու կերպը վորոշելու համար, ինչպես կտեսնենք հետագայում, հարկավոր է հաշվի առնել առի խորությունը:

Վարելու կերպերը մի քանիսն են: Փննենք ամենից տարածվածները:



Նկ. 15. Վարը բաժիններով (փայերով) մե թևի (СВАТ) վրա:

Բաժիններով վարելը տրակտորային գութաններով ամենատարածված ձևն է: Բաժնի մեծությունը ընտրությունը, նրա յերկարությունը և լայնությունը կախված է

ինչպես ամբողջ հողամասի ձևից և մեծությունից, նույնպես և գութանից, վորով պիտի մշակվի հողը:

Տրակտորաքարշ գութանով աշխատելու դեպքում պետք է աշխատել կտրել վորքան հնարավոր է յերկար և վոչ լայն բաժին, վորովհետև այդպիսով կպակասի տրակտորի ազատ վազքը, և տրակտորի օգտագործումը կդառնա լրիվ: Վորքան ուժեղ է տրակտորը, վորքան շատ է խոփերի թիվը՝ այնքան լայն և յերկար է վերցվում բաժինը, և ընդհակառակը՝ փոքր թիվով խոփերի դեպքում ընտրվում է փոքր բաժին:


Բաժինների լայնությունը կախված է նաև այն տրակտորների թվից, վորոնք մասնակցում են տվյալ բաժնում: Վորքան շատ տրակտորներ, այնքան լայն է վերցվում բաժինը: Բաժնի յերկարությունը հարկավոր է վորոշ չափով սահմանափակել, վորովհետև շատ յերկար բաժիններում դժվարանում է տրակտորի հսկողությանը և պարենավորման գործը: Այն տրակտորների համար, վորոնց ուժը աշխատանքի ժամանակ հավասար է 10, 15-ի, ամենահարմար բաժինը պետք է համարել յերկարությամբ մոտ 2 կիլոմետր և լայնությամբ 60—100 մետր:

Վարը կարող է լինել մի թևի և յերկթևի: Մի թևի վարելու ժամանակ, բաժնի միջով մի ակոս քաշելով, դուրս են գալիս չվարած ծայրը, և այնտեղ շուռ գալիս դեպի աջ, շարունակելով վարել ակոսի շուրջը, կծկելով, շուռ գալով ամեն անգամ դեպի աջ: Այս ձևի վարելու ժամանակ կենտրոնում ստացվում է թումբ, վորի տակ մնացել է չվարած հողաշերտ, իսկ ծայրերում բաց ակոսներ:

Յերկթևի (развал) վարելու ժամանակ սկսում են բաժնի ծայրերից: Քաշելով առաջին ակոսը ծայրով, շուռ են գալիս ձախ, անցնում են առանց աշխատանքի ամբողջ լայնությունը մինչև մյուս ծայրը, այստեղ շուռ գալով դեպի

ձախ, նորից քաշում են ակոս: Կտրելով այս ծայրի ակոսը, նորից կտրում են ազատ տարածությունը և մտնում առաջին ակոսը: Այսպես շարունակվում է այնքան ժամանակ, մինչև վոր վերջանում է բաժինը: Այս դեպքում կենտրոնում ստացվում են բաց ակոսներ, իսկ բաժնի ծայրերում չվարած հողամասեր: Այստեղ գութանի շրջումը կատարվում է նույնպես բաժնի չվարած մասերով:

Ինչպես տեսանք, մի թևի և յերկթևի վարը ունի այն անհարմարությունները, վոր առաջին դեպքում բաժնի մեջ տեղում ստացվում են թմբեր, իսկ 2-րդ դեպքում



դ. 16. Շրջանային վար: Տրակտորը վարում է ամեն անգամ շրջվելով դեպի ձախ:


քում առաջին ակոսներից առաջանում են արխեր: Վորպեսզի հարթվի այս դրությունը, հանձնարարվում է մի բաժինը վարել մի թևի, մյուսը՝ յերկթևի:

Վերև հիշված վարի դեպքերում բաժնում ստացվում են դատարկ վազքեր գութանի և տրակտորի մի ակոսից մյուս ակոսը:

Շրջումների և տեղափոխությունների համար ակոսների յերկու ծայրերում ստիպված թողնվում են չվարած հողամասեր:

սեր: Այս մասերը պիտի ունենան այնպես մեծութիւն, վորպեսզի տրակտորը հնարավորութիւն ունենա շրջվելու և տեղափոխվելու: Այս հողամասերը պիտի ունենան մոտավորապես տրակտորի և նրան կցած գութանի յերկարութեան կրկնակի տարածութիւնը: Աշխատանքը վերջացնելուց հետո այս մասերը վարվում են բաժիններին ուղղահայաց ուղղութիւնով:

Շրջանաձև վարի ժամանակ տրակտորը գութանի հետ բաց ե թողնվում հողամասի շուրջը. շրջվելու ժամանակ գութանը հողից չի հանվում: Նման դեպքում ընդհանրապես վարը կատարվում ե հողամասի ծայրերից դեպի կեն-



Նկ. 18 Ութ խորանոց տրակտորաքարշ գութան—յերեսավար, Վճուկ. հեղափոխ. անվան գործարանի, АТСМ մարկայի А և В լճակները ծառայում են յերեսավարի կարգավորման համար, В—կցառարձը տրակտորով:

տրոնը: Շրջանաձև վարի ժամանակ անկյունները վատ են վարվում: Բացի այդ, արտաքին անկյունները մնում են բոլորովին չվարված: Այս խամ մնացած անկյունները մնում ե վարել հետագայում: Շրջանային վարով ոգտվում են ավելի քիչ: Հարմար ե այդ ձևով վարել առանց ավտոմատի գութաններով:

Ուղղանկյունաձև հողամասը բաժինների անելը դժվարութիւն չունի:

Յեթե հողամասը ունի վոչ ուղիղ ձև, այդ դեպքում բաժիններ անելիս հարկավոր ե վերցնել այնպիսի բաժիններ, վորոնք տան գութանին ավելի հարմար աշխատանք քիչ դատարկ վազք: Նման դեպքերում կտրվում են ավելի փոքր բաժիններ, իսկ մյուս բաժիններին տրվում ե ցանկալի ձևը: Բաց թողնված տեղերը վարում են հետո:

ՏՐԱԿՏՈՐԱՔԱՐՇ 8-ԽՈՓԱՆՈՑ ԳՈՒԹԱՆ-ՅԵՐԵՍԱՎԱՐ (ЛУЩИЛЬНИК)


Ութը կորպուսներ կիսավիճարկաձև թևերով ամրացած են մի շրջանակի վրա: Գութանը ունի յերկու մեծ անիվ—դաշտանիվ և ակոսանիվ, և բացի այդ մի փոքրիկ անիվ գութանի յետևից:

Ձախ անիվի վրա կա ավտոմատ, վորը շարժման մեջ ե դրվում անմիջապես տրակտորիստի կողմից: Յերեսավարի ավտոմատը նման ե հախընթաց նկարագրած գութանների ավտոմատին, այդ պատճառով այստեղ նրա մասին կանգ չենք առնի:

Վարի խորութիւնը կանոնավորելու համար ոգտվում են հատուկ լծակով: Յերը հարկավոր ե խորութիւնը ավելացնել, այդ լծակի սանրի վրա տեղադրվում ե վեր, խորութիւնը պակասեցնելու դեպքում, լծակը իջեցնում են:

Բացի հիշած լծակից կա նաև վիճարկաձև լծակ, վորի աջ շրջելուց ակոսանիվը բարձրանում ե, առաջին խոփերը վարում են յերես: Ձախ դարձնելու դեպքում անիվը իջնում ե և առաջին խոփերը խորանում են: Հիշած յերկու լծակներն ել գործադրվում են տրակտորիստի կողմից անմիջապես, նստած տեղից: Գութանի խորութեան փոփոխութիւնը առաջացնում ե կցառարձի համապատասխան տեղադրումը:

Յերեսավարի բոլոր յերեք անիվներն ել կապված են իրար հետ և դրա շնորհիվ, դաշտանիվի բարձրացումը և իջեցումը անդրադառնում է յետևի փոքրիկ անիվի վրա:



Նկ. 18 Տրակտորաքարշ գութան-յերեսավարերի կցասարքը:

1. Տեղադրվող պլանկա, ծառայում է ուղղահայաց և հորիզոնական ուղղությամբ դիշլայի դրուվումը փոփոխելու համար, 2. բարձրութունը փոփոխող կանոնավորիչ, 3. հորիզոնական կանոնավորիչ: A և B ցույց են տալիս տեղադրվող պլանկայի դանազան դրուվումը:

Գութանի կցումը տրակտորին կատարվում է առանձին հարմարեցրած կցիչով, վորն ունի ինչպես հորիզոնական, նույնպես և ուղղահայաց կանոնավորիչ: Պլաստինկայի (2) դանազան տեղադրումով ստացվում է բարձրության կցավորիչի անցքերում կատարելով բոլորի յերեք դանազան տեղադրում (3), ստանում են յերեք դանազան դրուվումը ըստ լայնության:

Բացի այդ, դիշլայի ուղղությունը փոփոխել կարելի է հատուկ պլանկայի տեղադրումով հորիզոնական և ուղղահայաց ուղղությամբ:

Ութխոփանոց յերեսավարի ղեկավարումը նման է տրակտորաքարշ նույն տիպի գութանների ղեկավարմանը:

Ութխոփանոց գութան-յերեսավարի մարկան է AT8JI

A — ավտոմատային, T — տրակտորային, Ց — ութ կորպուս,

II — ձուլածո ստոյկա: Այս յերեսավարի առը 122 սանտիմետր է: Վարել կարող է 10—11 սանտիմետր: Նրա քաշը հավասար է 300 կիլոգր.: Գինը գործարանում՝ Ոդեսսայում, 200 ռուբլի յե:

ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ինչպես տեսանք, տրակտորաքարշ գութանը համեմատաբար բարդ գործիք է: Կազմված է նա բազմաթիվ մասերից և պահանջում է լուրջ վերաբերմունք:

Տրակտորաքարշ գութանը լրիվ ոգտագործելու համար աշխատանքը տարվում է 20 ժամ որական, յերկու հերթի. գիշերները աշխատանքը տարվում է լապտերների լույսի տակ: Շատ աշխատանքի ժամանակ գութանը շատ ել մաշում է: Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել աշխատանքի ժամանակ, կատարել լավ նորոգում վորևե մասի մաշվելու կամ կոտրվելու դեպքում: Ամեն մի գութանի հետ տրվում է ձեռնարկ, թե ինչպես պիտի խնամել գութանը: Այդ ձեռնարկում տրված է պահեստի մասերի ցուցակը և այդ մասերի նկարը: Այդ գիրքը հարկավոր է պահպանել և նրանով ստուգել պահանջվող մասերը:

Ամեն մաս ունի իր համարը, ձուլած այդ մասի վրա: Այդ համարի տակ էլ նշանակված է պահեստի մասը ցուցակում և նկարի վրա:

Մաշելու կամ կոտրելու դեպքում հարկավոր է փոխարինել և կատարել թեթև նորոգում, յեթե պահանջվում է

կատարել բարդ նորոգում, հարկավոր ե գութանը հանձնել արհեստանոց: Միայն լավ կատարած նորոգումն ե ապահովում գութանի վերականգնումը: Վատ կատարած նորոգումը կարող ե բոլորովին փչացնել գութանը և դուրս գցել աշխատանքից: Չաշխատելու ժամանակ հարկավոր ե մեքենաները պահել փակ շենքերում:

Պահպանելով մեքենաները, մենք խնայում ենք խորհրդային միության արժեքները:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	3
2. Տրակտորաքարշ գութանի նկարագրությունը	4
3. Տրակտորաքարշ գութանների արտադրողականությունը	22
4. Տրակտորաքարշ գութանի կարգավորումը և խնամքը	24
5. Ինչպե՞ս վարել տրակտորաքարշ գութանով	33
6. Ութխիստի գութան—յերեսավար	37
7. Յեզրափակում	39



12 407.

5064

16042
Цена 12 к.
С.-Х. 3



Б. А. ЖДАНОВ

Тракторный плуг

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр. Никольская, 10